նրանցից կամ մենամարտութիւն կամ ուտելիք և խմելիք, որ կոչւում է ազափանա»[1]):

Երկու հակառակ խմբերի մրցման ու ընդհարման նոյն պատկերն է նկարում պ. Բենսէն Բուլանըխում կատարուող հարսանեկան սովորութեան վերաբերմամբ։ «Բոլորն ընդածուրիկ երիտասարդներն (փեսայի կողմից), տօնական շորերով զարդարուած, ընտիր ձիերու վրայ հեծած, ձեռքերնին երկայն ու հաստ փայտեր՝ և ոմանց՝ նաև զէնքեր առած, երգելով քրդական լօյն, ձիարշաւով և ջրինդով առաջ կերթան։ Ահա և մի խումբ ձիաւորների, որ աղջկայ գիւղի կողմից կըդիմաւորէ հարսնածին, ջրինդով մրցութիւն կըսկսուի. մէկն իւր ձին, միւսն իւր ձեռքի ոյժը կըփորձէ, մական կըձգեն, հարուած կըտան, կերգեն, կըբօռան և հարահրոցով կըմօտենան գիւղին, բայց վերջինիս նպատակն է հարսնածից *քոլօս* (գլխարկը) փախցրնել, որ եթէ յաջողուի իրենց, հարսնածի համար մեծ անպատուութիւն կըհամարուի։ Ջրինդի խրարանցման միջոցին դիմաւորող խմբից մէկը հարսնածի անդամներից մէկի «քոլօսն» առնելով կըփախչէ. բոլոր ձիաւորները կընդնեն յետևից, կողմնակիցները կըքաջալերեն, հակառակորդները կըհալածեն մինչև գիւղը, եթէ բռնել յաջողեցան՝ լաւ կըդնդսեն. իսկ եթէ ոչ՝ կորագլուխ կըլինեն, և 10—20 դրուշ տալով, քոլօսը յետ կ'առնեն։ Եթէ քոլօս փախցրնելը չյաջողուի, ձիաւորները խաղը շարունակելով և իբրև ախոյեաններ մրցելով կըմօտենան գիւղին»[2]):

Այս տեսակ կեղծեալ ընդդիմադրութիւն ցոյց են տալիս փեսայի ընկերներակիցները ոչ միայն աղջկայ գիւղի սահմանում, այլ և այն տանը, որտեղ ապրում է հարսնացուն։ Ախալցխայի գաւառում «հարսի ազգականները, առաւելապէս երիտասարդութիւնը կեղծօրէն ընդդիմանում էր գաւիթ ներս թողնել փեսացուին և սրա ուղեկիցներին»

[1]) Բաջբերունի՝ Ճանապարհորդական նկատողութիւններ— Դարալագեազ «Փորձ» 1881 թ. № IV.

[2]) Բենսէ՝ Բուլանըխ—«Ազգագրական Հանդէս» 1899թ. գիրք Ե.

Հայ մատենագրության թուանշային գրադարան